ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/413/2025

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 03 նոյեմբերի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող) Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարուխյանի, 2025 թվականի նոյեմբերի 3-ին քննելով Արամ Իշխանի Մանուկյանի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 189.20-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/413/2025 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 40.1-ին հոդվածով վերապահված գործառույթների շրջանակում, ինչպես նաև հիմք ընդունելով «Ապրելու երկիր» կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) 2023 և 2024 թվականների տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքում վերհանված տվյալները, պարզել է, որ Արամ Իշխանի Մանուկյանի կողմից Կուսակցությանը կատարված նվիրատվությունների գումարները գերազանցել են «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Սահմանադրական օրենք) 24-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված նվիրատվությունների, անդամավճարների, մուտքի վճարների

ընդհանուր սահմանաչափը: Մասնավորապես, Կուսակցության՝ 2023 թվականի տարեկան հաշվետվության ստուգմամբ պարզ է դարձել, որ Արամ Իշխանի Մանուկյանի կողմից կատարվել է նվիրատվություն 2,700,000 ՀՀ դրամի չափով, այսինքն՝ մեկ ֆիզիկական անձի կողմից նվիրատվության առավելագույն սահմանաչափը 200,000 ՀՀ դրամով գերազանցող նվիրատվություն:

Մասնավորապես, Արամ Իշխանի Մանուկյանի կողմից 2023 թվականի սեպտեմբերի 01-ին, 2023 թվականի հոկտեմբերի 30-ին և 2023 թվականի նոյեմբերի 30-ին Կուսակցությանը համապատասխանաբար կատարվել է 2,500,000 ՀՀ դրամ, 100,000 ՀՀ դրամ և 100,000 ՀՀ դրամ նվիրատվություն, փոխանցվել է ընդհանուր առմամբ 2,700,000 (երկու միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ գումար, որից 200,000 ՀՀ դրամը 2024 թվականի հոկտեմբերի 29-ին Կուսակցության կողմից վերադարձվել է Արամ Իշխանի Մանուկյանին:

1.2 Վերոնշյալ խախտման հայտնաբերմամբ պայմանավորված՝ Հանձնաժողովը 2025 թվականի սեպտեմբերի 30-ին թիվ 01/3639-2025 գրությամբ Արամ Մանուկյանին է ուղարկել ծանուցում նվիրատուի կողմից Կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցելու զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման վերաբերյալ, միաժամանակ առաջարկվել է ծանուցումը ստանալուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը՝ ժամը 11:00-ին ներկայանալ Հանձնաժողով մասնակցելու Օրենսգրքի 189.20-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման հատկանիշներով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն, իսկ 5-րդ աշխատանքային օրը՝ ժամը 15:00-ին՝ առերևույթ իրավախախտման հիմքով կազմված արձանագրության և վերաբերելի նյութերի հիման վրա վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը:

1.3 Հաշվի առնելով այն, որ ծանուցումն ուղարկելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, Հանձնաժողովում առկա չի եղել Արամ Մանուկյանի կողմից գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված լինելը հավաստող ապացույց (փոստային ծանուցագիրը ստացած լինելը հավաստող փոստային հետադարձ առաքանին)՝ այն 2025 թվականի հոկտեմբերի 21-ին տեղադրվել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, ինչպես նաև

ուղարկվել է Երևանի քաղաքապետին, որից հետո հինգերորդ օրը, համապատասխան ծանուցումը համարվել է հանձնված (ստացված):

1.4 2025 թվականի հոկտեմբերի 30-ին պատշաճ ծանուցված Արամ Իշխանի Մանուկյանի բացակայությամբ կազմվել է թիվ 489/25 ՎԻՎ արձանագրությունը՝ Օրենսգրքի 189.20-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.5 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Արամ Իշխանի Մանուկյանի և Կուսակցության ներկայացուցիչ Արաքսյա Գրիգորյանի ներկայությամբ 2025 թվականի նոյեմբերի 3-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Գործի քննության ընթացքում վարույթի շրջանակներում քննարկվող հարցի առնչությամբ Արաքսյա Գրիգորյանը հայտնեց, որ Արամ Մանուկյանը հանդիսանում է Կուսակցության ղեկավար կազմի անդամ: Նշեց, որ Արամ Մանուկյանը միտում չի ունեցել օրենքը խախտելու և միայն անուշադրության հետևանքով է կատարվել իրավախախտումը: Միաժամանակ խնդրեց, որ որոշում կայացնելիս Հանձնաժողովը հաշվի առնի այն հանգամանքը, որ նվիրատվության սահմանաչափը գերազանցող գումարը Կուսակցությունը վերադարձրել է Արամ Մանուկյանին:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրեց Արամ Մանուկյանի կողմից կատարվածը դիտարկել որպես նվազ նշանակության իրավախախտում, քանի որ վերջինս առաջին անգամ է դա կատարել:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/413/2025 վարչական վարույթում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

3.1 Արամ Իշխանի Մանուկյանի կողմից 2023 թվականի սեպտեմբերի 01-ին, 2023 թվականի հոկտեմբերի 30-ին և 2023 թվականի նոյեմբերի 30-ին Կուսակցությանը համապատասխանաբար կատարվել է 2,500,000 ՀՀ դրամ, 100,000 ՀՀ դրամ և 100,000 ՀՀ դրամ նվիրատվություն, փոխանցվել է ընդհանուր առմամբ 2,700,000 (երկու միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ գումար, որից 200,000 ՀՀ դրամը 2024 թվականի հոկտեմբերի 29-ին Կուսակցության կողմից վերադարձվել է Արամ Իշխանի Մանուկյանին:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

4.1 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի գործառույթներն են՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում և կարգով կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը, ներառյալ՝ կուսակցությունների ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին տարեկան հաշվետվությունների (այսուհետ՝ կուսակցությունների տարեկան հաշվետվություններ) ներկայացման պահանջների պահպանման և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգումը:

4.2 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը ստուգում է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ներկայացման պահանջների պահպանումը և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատությունն ու ամբողջականությունը:

4.3 Սահմանադրական օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունը, ներառյալ՝ կուսակցությունների տարեկան հաշվետվության ստուգումն իրականացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ սույն օրենքով և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված կարգով:

4.4 Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կուսակցություններն իրավունք ունեն գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների, ներառյալ՝ փոխառությունների, երրորդ անձի կողմից կուսակցության պարտքը մարելու, պարտատիրոջ կողմից կուսակցության պարտքը ներելու, ինչպես նաև կուսակցության օգտին կատարվող այլ գործունեության տեսքով նվիրատվություններ ստանալու ֆիզիկական անձանցից, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի:

4.5 Սահմանադրական օրենքի 2023 թվականին գործող խմբագրության 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Կուսակցությանը տրվող նվիրատվության, ինչպես նաև անդամավճարի և մուտքի վճարի ընդհանուր չափը՝ դրամական արտահայտությամբ, մեկ տարվա ընթացքում չի կարող գերազանցել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրհազարապատիկը, **այդ թվում՝ մեկ ֆիզիկական անձի կողմից՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկը:**

4.6 Օրենսգրքի 189.20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Նվիրատուի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ առավելագույն չափը գերազանցող գումարի չափով:

4.7 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 189.20-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.8 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.9 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.10 Սահմանադրական օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունը, ներառյալ՝ կուսակցությունների տարեկան հաշվետվության ստուգումն իրականացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ սույն օրենքով և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված կարգով:

4.11 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.12 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.13 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենսգրքի 189.20-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դրույթը նպատակ է հետապնդում ապահովել հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հանրային հաշվետվողականությունը, կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը, ինչպես նաև նվազեցնել կուսակցությունների կախվածությունը մասնավոր անձանցից:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյոք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Հանձնաժողովը հաստատված է համարում, որ Արամ Իշխանի Մանուկյանի կողմից կատարված արարքով, այն է՝ Օրենսգրքի 189.20-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտմամբ խաթարվել է նշված նորմով Օրենսդրի կողմից վերը նշված հետապնդվող նպատակը, քանի որ վերջինիս գործողություններով չեն պահպանվել Կուսակցությանը նվիրատուի կողմից նվիրատվություն կատարելու առավելագույն չափին ներկայացվող պահանջները:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Արամ Իշխանի Մանուկյանը ենթակա է պատասխանատվության Օրենսգրքի 189.20-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքի համար:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ (…) վարչական մարմինները պարտավոր են անհատական մոտեցում ցուցաբերել էապես տարբեր փաստական հանգամանքների նկատմամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե վարչական որևէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձևով, ապա **միանման դեպքերում**

հետագայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձևով:

Նշված իրավանորմով պայմանավորված՝ Հանձնաժողովն, անդրադառնալով վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշմանն առ այն, որ վարչական իրավախախտումը Արամ Մանուկյանի կողմից առաջին անգամ է կատարվել և այն պետք է դիտարկել որպես նվազ նշանականության իրավախախտում, փաստում է, որ Հանձնաժողովի նախադեպային պրակտիկայի համաձայն՝ նմանատիպ փաստական հանգամանքների նկատմամբ կիրառման ենթակա է եղել տույժ՝ ապահովելով միատեսակ իրավակիրառ պրակտիկա, մասնավորապես Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ իր կողմից նախկինում կայացված 2024 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ **ՎԻՎ/430/2024** որոշմանը, որով նույնանման փաստական հանգամանքներում արձանագրվել է Օրենսգրքի 189.20-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված խախտում՝ Նվիրատուի կողմից Կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցելու համար և կիրառվել է վարչական տույժ առավելագույն չափը գերազանցող գումարի՝ 199,000 (հարյուր իննսունինը հազար) ՀՀ դրամի չափով:

(https://cpcarmenia.am/wp-content/uploads/2024/12/00-8.pdf)

Հետևապես քննարկվող դեպքում ևս պետք է կիրառել տույժ՝ ապահովելով միատեսակ մոտեցում միանման փաստական հանգամանքների նկատմամբ: Միաժամանակ, տվյալ դեպքում Հանձնաժողովը կարևոր է համարում այն, որ չթույլատրված նվիրատվության չափը կազմում է 200,000 ՀՀ դրամ, քանի որ Հանձնաժողովն իր կողմից կայացված նախորդ որոշումներով նվազ նշանակություն է գնահատել միայն այն դեպքերը, երբ չթույլատրված նվիրատվության չափը չի գերազանցել 100,000 ՀՀ դրամը:

Հիմք ընդունելով ամբողջ վերոգրյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 26-րդ հոդվածով, Օրենսգրքի 189.20-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ապրելու երկիր» կուսակցությանը Արամ Իշխանի Մանուկյանի կողմից նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցելու համար Արամ Իշխանի Մանուկյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ առավելագույն չափը գերազանցող գումարի՝ ***200,000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:***

2. Տուգանքը պետք է վճարվի գանձապետական ***900005001335*** «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» ***հաշվեհամարին***՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արամ Իշխանի Մանուկյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ